

**Նախնական զինվորական պատրաստություն և անվտանգ կենսագործունեություն
առարկայի օլիմպիադա 2018թ.
ՄԱՐԶԱՅԻ/ՔԱՂԱՔԱՅԻՆ/ ՓՈՒԼ
9 - րդ դասարան**

Տևողությունը՝ 120 րոպե:

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց համակարգով:

Տեստային առաջադրանքին տրված ճիշտ պատասխանը գնահատվում է 1 (մեկ) միավոր, իսկ գրավոր առաջադրանքին՝ 0.5 (կես) միավոր:

1. S-72 Տանկի հիմնական սպառազինությունը՝

ա) 7,62 մմ տրամաչափի գնդացիրն է

բ) 7,62 մմ տրամաչափի գնդացիրը և 12,7 մմ տրամաչափի զենիթահրթիռային գնդացիրը

գ) 125 մմ հարթափող թնդանոթն է

դ) 135 մմ հարթափող թնդանոթն է

2.Ի՞նչ պարզևներով են պարզևատրվում ՀՀ ազգային և Արցախի հերոսները.

ա) Մարտական Խաչ և Հայրենիք

գ) Ոսկե Արծիվ և Մարտական Խաչ

բ) Հայրենիք և Ոսկե Արծիվ

դ) Հայաստանի ազգային հերոս

3. Մագնիսական սլաքի ցույց տված ուղղությունը, որն անցնում է կանգնած կետով կոչվում է.

ա) Մագնիսական ազիմուտ

բ) Ազիմուտ

գ) Աշխարհագրական ազիմուտ

դ) Մագնիսական և աշխարհագրական ազիմուտ:

4.Ի՞նչ է մասշտաբը:

ա)թվային արտահայտություն է, որը ցույց է տալիս տարածքի իրական չափերը:

բ)թվային արտահայտություն է (պայմանական չափի), որը ցույց է տալիս, թե քարտեզի վրա պատկերված տարածքը քանի անգամ է փոքրացված իրական չափերից:

գ) թվային արտահայտություն է (պայմանական չափի), որը ցույց է տալիս, թե քարտեզի վրա պատկերված տարածքը քանի անգամ է մեծացված իրական չափերից:

դ) թվային արտահայտություն է (պայմանական չափի), որը ցույց է տալիս, թե քարտեզի վրա պատկերված առարկաները քանի անգամ է փոքրացված իրական չափերից:

5. Որքա՞ն է նոնականետի քաշը.

- ա) 6.3 կգ գ) 6.2 կգ
բ) 3.6 կգ դ) 5.3 կգ

6. Ո՞րքան է S-72 տանկի մարտալրակազմը.

- ա) 45 արկ:
բ) 40 արկ:
գ) 50 արկ:
դ) 45-50 արկ:

7. Վնասվածք ստանալու պահից սկսած առաջին կես ժամը կոչվում է.

- ա) <<Թանկ ժամանակ>> գ) <<Բարենպաստ ժամանակ>>
բ) <<Ոսկի ժամանակ>> դ) <<Հարմար ժամանակ>>

8. Շարքի ճակատի հակադիր կողմը կոչվում է՝

- ա) Ետնակողմ գ) Թև
բ) Թիկունք դ) Ետնամաս

9.Ըստ արձանագրությունների Արգիշտի 2-րդի արձակած նետը անցել է՝

- ա) 950 կանգուն:
բ) 1000 կանգուն:
գ) 800 կանգուն:
դ) 900 կանգուն:

10.Ադրբեջանի զինված ուժերի թվաքանակը՝

- ա) 124 000 մարդ է: գ) 1 144 000 մարդ է:
բ) 114 000 մարդ է: դ) 214 000 մարդ է:

11. Ի՞նչ խնդիրներ է կատարել հայկական բանակը հին դարերում:

Հայկական բանակը կատարել է հետևյալ խնդիրները.

Ապահովել երկրի անվտանգությունը, հակահարված տալ թշնամուն, կատարել դաշնագրային պարտականությունները:

12. Ի՞նչ ունի մոտոհրաձգային ջոկը հակառակորդի տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարելու համար:

Հակառակորդի տանկերի և զրահամեքենաների դեմ պայքարելու համար մոտոհրաձգային ջոկն ունի հակատանկային կառավարվող հրթիռային համալիր(ՀԿՀՀ), ձեռքի հակատանկային նռնականետ, ձեռքի հակատանկային նռնակ և հետևակի մարտական մեքենա(ՀՄՄ) հրանոթ:

13. Սողանքի նախանշաններն են՝ դռների ու պատուհանների փեղկերի սեղմվումը, պատերի վրա ճաքերի առաջացումը, ծառերի ու ցանկապատերի տեղաշարժը և այլն:

14. Հորիզոնի կողմերը Արեգակի և ժամացույցի օգնությամբ որոշելու համար անհրաժեշտ է ժամացույցը պահել հորիզոնական դիրքով և պտտել այնպես, որ փոքր սլաքը ուղղված լինի դեպի Արեգակը: Փոքր սլաքի և թվատախտակի <<1>> թվի միջև ընկած անկյունը պետք է մտովի կիսել երկու հավասար մասի: Անկյան կիսորդը ցույց կտա ուղղությունը դեպի հարավ: Մինչև կեսօր (13⁰⁰) թվատախտակի վրա սկսվող անկյունը կլինի <<1>> թվից ձախ, իսկ կեսօրից հետո՝ աջ:

15. Ի՞նչ է գործառույթ է կատարում փակաղակը:

Փակաղակը փամփուշտը մղում է փամփշտանոց, փակում է փողանցքը, հարվածում է հրապատիճին և փամփշտանոցից հանում է պարկուճը (փամփուշտը)

16. Ե՞րբ է հաստատվել զինվորական երդման տեքստը:

Երդման տեքստը հաստատվել է ՀՀ գերագույն խորհրդի կողմից 1991 թվականի դեկտեմբերի 27-ին:

17. Շարքային կազմի զինծառայողներին կարող են տրվել հետևյալ կարգապահական տույժերը՝

- նկատողություն,
- խիստ նկատողություն,
- զրկել զորամասի տեղաբաշխման վայրից հերթական արձակումից՝ մինչև մեկ ամիս ժամկետով,
- նշանակել աշխատանքի արտահերթ վերակարգ՝ մինչև 5 վերակարգ,
- Հետաձգել հիմնական արձակուրդ տալը՝ 1 ամսից մինչև 3 ամիս ժամկետով,

- Ուղարկել կարգապահական վաշտ՝ տասն օրից մինչև 1 ամիս ժամկետով,
- Զրկել գերատեսչական կրճաճանից:

18. Ովքե՞ր էին Հայաստանի առաջին Հանրապետության չորս զինվորական նախարարները:

Հովհաննես Հախվերդյան,
Քրիստափոր Արարատյան,
Ռուբեն Տեր-Մինասյան,
Դրաստամատ Կանայան:

19. Ազիմուտը կարող է լինել

0°-ից մինչև 360°:

20. Ինչի՞ համար է նախատեսված պահեստառուփը:

Պահեստառուփը նախատեսված է փամփուշտների տեղավորման և դրանք փողատուփ մղելու համար: